

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի, 2020 N 8

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԸ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Մ**.

1. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական սահմանի անցակետով (այսուհետ՝ անցակետ) արգելվում է Արցախի Հանրապետության քաղաքացիների ելքը:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձանց՝ Արցախի Հանրապետության տարածքից ելքի արգելքից բացառություն է արվում՝

1) բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և մեկ ուղեկցողի համար՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդը և (կամ) ուղեկցողը պետական սահմանի անցակետում հարկային մարմնի պաշտոնատար անձանց ներկայացնում են բեռնափոխադրման փաստը հավաստող փաստաթղթերը (առկայության դեպքում) կամ բեռի տիրոջ վերաբերյալ տվյալները, որից հետո հարկային մարմնի պաշտոնատար անձինք, արտաքին զննությամբ հավաստելով արտահանվող ապրանքների՝ ակնհայտ առևտրային քանակ համարվելու հանգամանքը, դա դիտում են որպես բեռնափոխադրում և այդ մասին տեղեկացնում անցակետի ոստիկանության ծառայողներին:

Արցախի Հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքներ ներկրելու նպատակով բեռնափոխադրում իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցի վարորդը և (կամ) ուղեկցողը անցակետում հարկային մարմնի պաշտոնատար անձանց ներկայացնում են գործարքի կողմ հանդիսացող ԱՀ հարկ վճարողի (ֆիզիկական անձի) տվյալները, որի հիման վրա հարկային մարմնի պաշտոնատար անձինք ճշտում են կողմերի միջև գործարքի հավաստիությունն ու իրականացման ժամկետը և դա բեռնափոխադրում համարելու դեպքում այդ մասին տեղեկացնում անցակետի ոստիկանության ծառայողներին:

Հարկային մարմնի պաշտոնատար անձանց տեղեկատվությունը հիմք է հանդիսանում ԱՀ ոստիկանության համար բեռնափոխադրում իրականացնող անձանց ելքը Արցախի Հանրապետությունից թույլատրելու համար.

2) տնտեսական կամ արտադրական անհետաձգելի կարիքների առկայության դեպքում՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Տնտեսական կամ արտադրական կարիքներն անհետաձգելի ճանաչելու խնդրանքով շահագրգիռ կազմակերպությունը, Արցախի Հանրապետության տարածքից ելքի նախատեսվող օրվանից առնվազն երեք օր առաջ, դիմում է իրավասու պետական մարմին՝ ելքի թույլտվություն ստանալու խնդրանքով: Իրավասու մարմինը, քննարկելով դիմումը, կարող է միջնորդել Պարետին տնտեսական կամ արտադրական կարիքներից ելնելով նշված կազմակերպության ներկայացուցիչների ելքը թույլատրելու համար՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Միջնորդության մեջ նաև նշվում են այն անձի (անձանց) մասին տվյալները, ովքեր միջնորդության բավարարման դեպքում պետք է դուրս գան Արցախի Հանրապետությունից: Միջնորդության քննարկման արդյունքում տնտեսական կամ

արտադրական կարիքներն անհետաձգելի համարելու դեպքում Պարետը ցուցում է տալիս (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) ԱՀ ոստիկանությանը՝ այդ մասին հայտնելով միջնորդություն ներկայացրած մարմնին:

3) առողջապահական անհետաձգելի կարիքների առկայության դեպքում՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Առողջապահական կարիքն անհետաձգելի է ճանաչվում ԱՀ առողջապահության նախարարության կամ «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

Տեղեկանքը հիմք է հանդիսանում ԱՀ ոստիկանության համար դրանում նշված անձի (անձանց) ելքը Արցախի Հանրապետությունից թույլատրելու համար.

4) հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականների համար (սույն որոշման իմաստով մերձավոր ազգական են համարվում հանգուցյալի ծնողները, ամուսինը, կինը, երեխաները, քույրը և եղբայրը)՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով թույլատրվում է հանգուցյալի մեկ կամ մի քանի մերձավոր ազգականների և վերջին(ներ)իս ուղեկցող մեկ վարորդի ելքը Արցախի Հանրապետությունից՝ ԱՀ ոստիկանության կողմից կատարված ճշտումների արդյունքում հանգուցյալի հետ մերձավոր ազգական լինելու հանգամանքը պարզվելուց հետո.

5) պաշտոնական այցերի դեպքում՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Արցախի Հանրապետության պետական մարմինների ներկայացուցիչները պաշտոնական այցի շրջանակներում կարող են դուրս գալ Արցախի Հանրապետության տարածքից՝ ոստիկանությանը տրված ԱՀ Նախագահի ցուցումի (թղթային կամ էլեկտրոնային եղանակով կամ բանավոր), Պարետի ցուցումի (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) կամ ԱՀ Ազգային ժողովի նախագահի գրության (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) հիման վրա.

6) ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի և զինտեխնիկայի համար.

7) Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց ընտանիքների՝ Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անդամների համար՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերը ԱՀ ոստիկանությանը ներկայացվելու դեպքում.

8) Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերում.

9) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող անձանց համար՝ հետևյալ ընթացակարգի պահպանմամբ.

Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնելու համար հարկային մարմնում հաշվառված անձինք (սուբյեկտները) գրավոր կամ բանավոր եղանակով դիմում են ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն՝ ելքի բազմակի թույլտվություն ստանալու խնդրանքով: Նախարարությունը, քննարկելով դիմումները, ներկայացված տեղեկությունները հավաստի համարելու դեպքում այդ անձանց վերաբերյալ տվյալները (մի քանի անձանց դեպքում՝ ցուցակները) ներկայացնում է Պարետին՝ նրանց ելքը թույլատրելու միջնորդությամբ: Միջնորդությունը բավարարելու դեպքում Պարետը ելքը թույլատրելու մասին համապատասխան ցուցում է տալիս (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով) ԱՀ ոստիկանությանը՝ այդ մասին հայտնելով միջնորդություն ներկայացրած մարմնին:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ Արցախի Հանրապետությունից անձանց ելքի և ելքի նպատակի մասին ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել Պարետին:

4. ԱՀ ոստիկանության պետին, ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ֆինանսների նախարարին՝ ապահովել սահմանված միջոցառումների իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 00:01-ին:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ